
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՐՔՈՒՄ ՀԱՆՑԱՆՔԸ ԾԱՆՐԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Քրեական պատասխանատվության տարբերակման միջոցների համակարգում իրենց նշանակությամբ առանձնանում են քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսվող հանցանքը ծանրացնող հանգամանքները, որոնց քրեաիրավական նշանակությունը երկակի է: Մի կողմից, դրանք հանցակազմի հատկանիշ են և ազդում են արարքի քրեաիրավական գնահատականի վրա, փոխում են նորմի դիսպոզիցիայի առանձնահատկությունն արտացոլող սանկցիան, քանի որ «օրենքի դիսպոզիցիայում հանցագործության յուրաքանչյուր ընդհանուր տիպային բնորոշմանը, յուրաքանչյուր հանցակազմին միշտ համապատասխանում է տիպային պատիժ, որը նախատեսված է սանկցիայում»¹: Մյուս կողմից, ծանրացնող հանգամանքները չեն մտնում հանրորեն վտանգավոր արարքի այն հատկանիշների համակցության մեջ, որոնք հիմք են տալիս այն բնութագրելու որպես հանցագործություն² և իրենց բովանդակությամբ նույնանում են պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներին:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել քրեական օրենսգրքում հանցանքը ծանրացնող հանգամանքները նախատեսելուց հրաժարվելու անհրաժեշտության մասին: Օրինակ՝ Ա. Տեր-Ակոպովը գրում է. «Հանցանքը ծանրացնող հանգամանքների նախատեսումը փակուղային ճանապարհ է քրեական օրենսդրության զարգացման համար, քանի որ այդպիսի հանգամանքների ցանկը անսահմանափակ է: Բացի այդ, հանցակազմերը կառուցելիս հանցանքը ծանրացնող հանգամանքների օգտագործումը պահանջում է ըստ վտանգավորության աստիճանի դրանց համաչափության ապահովում, ինչն ըստ էության անհնար է անել»³: Կարծում ենք, որ հանցանքը ծանրացնող հանգամանքները օրենքում նախատեսելուց հրաժարվելը վտանգի տակ կղնի արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի իրականացումը, քանի որ քրեաիրավական քաղաքականության իրավաստեղծ մակարդակում օրենսդրից պահանջվում է տարբերակել քրեական պատասխանատվությունը և նախատեսել յուրաքանչյուր հանցանքի հանրային վտանգավորությանը համարժեք պատիժ: Իսկ հանցանքը ծանրացնող բազմաթիվ հանգամանքներով քրեական օրենսգրքը չծանրաբեռնելու համար պարզապես անհրաժեշտ է ղեկավարվել այդ հանգամանքների

¹ Трайнин А. Н. Общее учение о составе преступления. М., 1957, с. 313.

² Стен Кудрявцев В. Н. Общая теория квалификации преступлений. М., 1999, էջ 59:

³ Тер-Акопов А. А. Защита личности – принцип уголовного права // "Современные тенденции развития уголовной политики и уголовного законодательства". М., 1994. с. 53.

նախատեսման չափանիշներով և կանոններով, որոնց պահպանումը թույլ կտա բացառել այնպիսի ծանրացնող հանգամանքների նախատեսումը, որոնք չունեն կրիմինալոգիական հիմնավորում, պատահական բնույթի են կամ առաջացնում են քրեական իրավունքի համակարգի գործառության խափանումներ:

Մասնագիտական գրականության մեջ հանցանքը ծանրացնող հանգամանքների նախատեսման կանոնները դասակարգվում են երկու խմբի՝ ըստ բովանդակության և ըստ ձևի⁴: Այդ դասակարգումը համահունչ է նաև քրեական իրավաստեղծման գործընթացում օրենսդրական տեխնիկայի՝ Ա. Վ. Իվանչինի կողմից տրված սահմանմանը, որը, ըստ հեղինակի, ընդգրկում է ինչպես քրեական օրենքի արտաքին ձևի, այնպես էլ բովանդակության մշակումը: Ըստ այդմ՝ իրավունքի բովանդակության և կառուցվածքի ձևավորման գործընթացը հեղինակն անվանում է ներքին օրենսդրական տեխնիկա, իսկ իրավունքի արտաքին ձևավորման մեխանիզմը՝ արտաքին օրենսդրական տեխնիկա⁵:

Ընդհանրացնելով գրականության մեջ արտահայտված մոտեցումները և վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր.օր.) Հատուկ մասով նախատեսված հանցանքը ծանրացնող հանգամանքները՝ կարելի է ներկայացնել հանցանքը ծանրացնող հանգամանքների բովանդակությանը վերաբերող հետևյալ կանոնները:

1. Ծանրացնող հանգամանքի առկայությունը պետք է բոլոր դեպքերում և անպայման էականորեն բարձրացնի հիմնական հանցակազմով նկարագրված արարքի հանրային վտանգավորությունը⁶: Այդ կանոնը պահպանված չէ, օրինակ, քր.օր.-ի հոդված 217-ի երկրորդ մասի երկրորդ կետում, որը որպես ահաբեկչության ծանրացնող հանգամանք նախատեսում է ահաբեկչության կատարումը հրազենի գործադրմամբ: Ահաբեկչության հասարակ տեսակի օբյեկտիվ կողմի հատկանիշ է, օրինակ, պայթյունը: Դժվար է պատկերացնել, որ պայթյունն ավելի ցածր հանրային վտանգավորություն ունի, քան հրազենի գործադրումը⁷:

Եթե որոշակի հանգամանքի առկայությունը ինքնին չի ազդում արարքի հանրային վտանգավորության աստիճանի բարձրացման վրա, ապա դա պետք չէ նախատեսել որպես ծանրացնող հանգամանք: Օրինակ՝ Ա. Թամազյանը, արտահայտվելով քր.օր.-ի հոդված 104-ի երկրորդ մասի 10.1 կետով նախատեսված ծանրացնող հանգամանքի (զանգվածային անկարգությունների ժամանակ դրա մասնակցի կողմից կատարված սպանությունը) վերացման օգտին, հարց է դնում. թե «...գործող օրենսդրության շրջանակներում ինչպե՞ս է որակվելու և ի՞նչ գնահատական է տրվե-

⁴ Տե՛ս **Костарева Т. А.** Квалифицирующие обстоятельства в уголовном праве. Дис. ... канд. юрид. наук. Казань, 1992, էջ 12:

⁵ Տե՛ս **Иванчин А. В.** Совершенствование Уголовного кодекса Российской Федерации на основе учения о законодательной технике // "Десять лет уголовному кодексу Российской Федерации: достоинства и недостатки" (Научно-практическая конференция) // "Государство и право", 2006, №11, էջ 113:

⁶ Տե՛ս **Кругликов Л. Л., Васильевский А. В.** Дифференциация ответственности в уголовном праве. СПб., 2002, էջ 184:

⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս», Եր., 2007, էջ 507:

լու, օրինակ, զանգվածային անկարգությունների ժամանակ նրա մասնակցի կողմից պատահմամբ իր դատերը բռնաբարողին հանդիպելու և վրեժի շարժառիթով նրան սպանելու արարքին: Գործող օրենսդրության համաձայն՝ այն, որպես ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն, ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10.1 կետով, որի համար և կարող է սահմանվել նաև ցմահ ազատազրկում: Արդարացի⁸ է, արդյոք, նման մոտեցումը: Ոչ, որովհետև հանցանքը ծանրացնող հանգամանք պետք է համարել նրա շարժառիթը, կատարման եղանակը, կատարողների թիվը, տուժողների քանակը, այլ ոչ թե միջավայրը⁹: Փաստորեն, բերված օրինակում քննարկվող կանոնը չի պահպանվել, քանի որ տվյալ դեպքում հանցանքի կատարման ժամանակը և սուբյեկտը ինքնին էականորեն չեն բարձրացնում սպանության հանրային վտանգավորությունը:

2. Ծանրացնող հանգամանքը պետք է տիպային լինի տվյալ հանցակազմի համար: Դա նշանակում է, որ ծանրացնող հանգամանքը պետք է բնորոշ լինի տվյալ հանցագործությանը: Այդ կանոնը պահպանված չէ, օրինակ, քր.օր.-ի հոդված 138-ի երկրորդ մասի ութերորդ կետում, որը որպես բռնաբարության ծանրացնող հանգամանք նախատեսում է բռնաբարության կատարումը կարգապահական գումարտակում պահվող անձի նկատմամբ այդ հաստատության աշխատակցի կողմից: Ըստ քր.օր.-ի հոդված 58-ի՝ կարգապահական գումարտակում պահելը կարող է նշանակվել միայն հանցանք կատարած ժամկետային ծառայության զինծառայողի, այսինքն՝ արական սեռի ներկայացուցչի նկատմամբ, մինչդեռ բռնաբարության տուժող կարող է լինել միայն իգական սեռի ներկայացուցիչը:

3. Հանցանքը ծանրացնող հանգամանքը պետք է բնորոշ չլինի հիմնական հանցակազմով նկարագրված արարքների մեծ մասին: Դա նշանակում է, որ ծանրացնող հանգամանքը չպետք է սովորական լինի հիմնական հանցակազմով նկարագրված արարքների մեծ մասի համար: Օրինակ՝ քր.օր.-ի հոդված 175-ի երկրորդ մասի չորրորդ կետով որպես ավազակության ծանրացնող հանգամանք նախատեսված է ավազակության կատարումը զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ: Սակայն ավազակությունը միշտ կատարվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ կամ դրա սպառնալիքով, և ավազակության շատ դեպքերի բնորոշ է զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը: Իսկ դա գործնականում հանգեցնում է քր.օր.-ի հոդված 175-ի առաջին մասի կիրառման ոլորտի խիստ նեղացմանը: Այսպես, ՀՀ ոստիկանության լրատվական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2011 թվականի ընթացքում գրանցվել է ավազակության 106 դեպք, որից 6-ը՝ ավազակության հիմնական հանցակազմով, իսկ 62-ը՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ, 2012 թվականին այդ թվերը համա-

⁸ **Ա. Ա. Թամազյան**, Սպանությունների որակման հիմնախնդիրները, Եր., 2011, էջ 320-321:

⁹ Տե՛ս **Кругликов Л. Л., Спиридонова О. Е.** Юридические конструкции и символы в уголовном праве. СПб., 2005, էջ 97:

պատասխանաբար կազմել են՝ 63, 5, 38, իսկ 2013 թվականին՝ 73, 5, 49: Ինչպես տեսնում ենք, զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կատարված ավազակությունների մասնաբաժինը ավազակությունների ընդհանուր թվի կեսից ավելին է (58,4 %-67,1 %), իսկ հիմնական հանցակազմով ավազակությունների մասնաբաժինը տատանվում է ընդամենը 5,6 %-ից 7,9 %: Օրինակի համար նշենք, որ Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 207-ում զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը նախատեսված չէ որպես ավազակության ծանրացնող հանգամանք¹⁰:

4. Ծանրացնող հանգամանքը չպետք է վերաբերի հանցագործությունների բազմակիության որևէ տեսակին: Այս կանոնն իր հերթին կարելի է մասնատել երկու մասի:

4.1. Ծանրացնող հանգամանքները չպետք է նշում բովանդակեն այլ հանցագործությունների հետ զուգորդվելու մասին: Մասնագիտական գրականության մեջ այդպիսի ծանրացնող հանգամանքները նախատեսող նորմերը (օրինակ՝ սպանությունը՝ զուգորդված մարդուն առևանգելու, պատանդ վերցնելու, ավազակության, շորթման, բանդիտիզմի, սեքսուալ բնույթի բռնի գործողություններով) անվանվում են նորմատիվային ավելորդաբանություններ, որոնք առաջացնում են քրեաիրավական նորմերի անհիմն մրցակցություն: Այս առումով Գ. Գրիգորյանը գրում է. «Օբյեկտիվ իրականության մեջ ավազակության, բանդիտիզմի ընթացքում կատարվող սպանության և դրանք ամրագրող քրեական օրենքների միջև անհրաժեշտ միասնություն չկա: ... սպանությունն իրականում կարող է զուգորդված լինել օդանավ փախցնելու, ծովահենության, դիվերսիայի կամ այլ արարքների հետ, որոնք չեն ընդգրկվել սպանության ծանրացնող հանգամանքներում: Եթե անգամ ծանրացնող հանգամանքներում սպանության հանցակազմի մեջ ընդգրկվեն այն բոլոր արարքները, որոնցով կարող է զուգորդվել, ապա կնշանակեր, թե ստեղծվել է հավասարակշռություն օբյեկտիվ իրականության մեջ առկա գործընթացների և դրանց օրենսդրական ամրագրման միջև: Ակնհայտ է, որ այդպիսի իրավիճակ հնարավոր չէ: Եթե ուշադրություն դարձնենք անձին առևանգելու, պատանդ վերցնելու, ավազակության հետ զուգորդված սպանություններին, ապա դրանք ոչ թե մեղավորի ինքնանպատակ ցանկությունն են, այլ բացառապես հանցագործությունը հեշտացնելու կամ թաքցնելու նպատակ են հետապնդում: Քրեական իրավունքին վաղուց է հայտնի սպանությունը՝ որևէ հանցանք թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով: Ուստի վերը նշված ծանրացուցիչ հանգամանքները նորմատիվային ավելորդություններ են, որոնք անհիմն մրցակցություն են առաջացնում: Սպանության վերաբերյալ այս նորմի առկայությունը օրենսգրքում կարելի է բացատրել նոր նորմերի ստեղծման զուտ սուբյեկտիվ մոտեցմամբ: Նման մոտեցումները խախտում են անհրաժեշտ կապը, հավասարակշռությունն օբյեկտիվ աշխարհի և դրա օրենսդրական ամրագրման միջև»¹¹:

¹⁰ Տե՛ս «Уголовный кодекс Республики Беларусь». СПб., 2001:

¹¹ Գ. Թ. Գրիգորյան, Քրեաիրավական նորմերի մրցակցությունը, Եր., 2008, էջ 17-18:

Ասվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ հանցանքը ծանրացնող հանգամանքը կարող է բովանդակել այլ հանցակազմ: Օրինակ՝ մարդուն առևանգելը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով (քր.օր.-ի հոդված 131-ի երկրորդ մասի երկրորդ կետ): Նման ծանրացնող հանգամանքների մեղսագրման պարագայում նույն արարքի համար կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքը չի խախտվում, նույնիսկ եթե լրացուցիչ ֆակուլտատիվ օբյեկտով հանցագործությունների որակման կանոնի¹² համաձայն՝ արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ:

4.2. Ծանրացնող հանգամանքները չպետք է նշում բովանդակեն հանցագործությունների ռեցիդիվի կամ հանցագործությունների բազմակիության՝ քր.օր.-ի Ընդհանուր մասում չնախատեսված տեսակների մասին: Այսպես, օրինակ, հանցագործությունների կրկնակիության ինստիտուտի վերացումից հետո քր.օր.-ի հոդված 158-ի երկրորդ մասի երրորդ կետում նախատեսված է «մեկից ավելի անգամ» ծանրացնող հանգամանքը: Կարծում ենք՝ դա չի բխում քրեական օրենքի Ընդհանուր և Չատուկ մասերի փոխկապվածության պահանջից և գործնականում կարող է առաջացնել այն նույն խնդիրները, որոնք ծագում էին հանցագործությունների կրկնակիության ինստիտուտի գոյության պայմաններում: Նույնը կարելի է ասել հոդված 213-ի երկրորդ մասի երկրորդ կետով նախատեսված «կատարվել է որպես արհեստ» ծանրացնող հանգամանքի մասին: Թեկուզ քր.օր.-ի Ընդհանուր մասում հանցանքը որպես արհեստ կատարելը նախատեսված է որպես պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, այնուամենայնիվ դրա օրենսդրական բնորոշման բացակայությունը և ընդհանրությունները հանցագործությունների կրկնակիության հետ գործնականում կարող են առաջացնել արարքի որակման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, անհասկանալի է, թե արդյոք պետք է համակցությամբ որակվեն շարունակվող հանցագործության ձևով չդրսևորվող վաշխառության դեպքերը, եթե անձը դրանով զբաղվում է որպես արհեստ: Թերևս կարելի է ընդունելի համարել քր.օր.-ի հոդված 141-ի երկրորդ մասի երրորդ կետով, հոդված 142-ի երկրորդ մասի չորրորդ կետով նախատեսված՝ «միևնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար» ծանրացնող հանգամանքի նախատեսումը, որն ըստ էության շարունակվող հանցագործության դրսևորում է և չի առաջացնում հանցագործությունների բազմակիություն:

5. Ծանրացնող հանգամանքին պետք է հնարավոր լինի տալ ընդհանրացված, հստակ իրավական բնորոշում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոկինակիսն ընդդեմ Չունաստանի գործով վճռում նշել է, որ Կոնվենցիայի հոդված 7-ի 1-ին կետը նախատեսված չէ լոկ քրեական իրավունքի հետադարձ կիրառումն ի վնաս մեղադրյալի արգելելու համար: Այն նաև ընդհանուր առմամբ մարմնավորում է այն սկզբունքը, որ

¹² Այդ կանոնը ձևակերպված է քր.օր.-ի հոդված 225-ի երկրորդ մասի սանկցիայում, ինչը, կարծում ենք, ճիշտ չէ, և այն պետք է նախատեսել քր.օր.-ի Ընդհանուր մասի՝ հանցագործությունների բազմակիությանը վերաբերող գլխում:

միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը, ինչպես նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի լայն մեկնաբանության տեղիք տա, օրինակ՝ համանմանությամբ: Սրանից հետևում է, որ հանցանքը պետք է հստակ սահմանված լինի օրենքով: Այս պայմանը բավարարված կհամարվի այն դեպքում, երբ անձը համապատասխան դրույթի ձևակերպումից, անհրաժեշտության դեպքում դատարանների մեկնաբանության օգնությամբ, կարող է հասկանալ, թե հատկապես որ գործողությունների ու անգործության համար է նա ենթակա պատասխանատվության¹³:

Ինչպես հիմնական հանցակազմի, այնպես էլ ծանրացնող հանգամանքներով հանցակազմի կոնկրետացման աստիճանը պետք է բավարար լինի ոչ միայն հետագայում իրավակիրառման դժվարություններից խուսափելու, այլև այն բանի համար, որ ընդունված նորմի բովանդակությունից անձը հստակ պատկերացում կազմի հանցակազմը նախատեսող նորմի գործողության սահմանների մասին:

6. Ծանրացնող հանգամանքը պետք է հնարավոր լինի թույլատրելի ապացույցներով հաստատել քրեական գործով վարույթի ընթացքում: Քրեական օրենքը կարող է բավարար արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ նորմով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշներն ապացուցելի են¹⁴: Դա նշանակում է, որ հանցակազմի հատկանիշը պետք է ձևակերպված լինի այնպես, որ դրա գոյության փաստը դեպքերի մեծ մասում հնարավոր լինի հայտնաբերել և ապացուցել հավաստիության բավարար աստիճանով, դատավարական առումով թույլատրելի եղանակով և առանց բարոյականությունը ու միջանձնային հարաբերությունները վնասելու:

Հանցանքը ծանրացնող հանգամանքների շարադրման արտաքին օրենսդրական տեխնիկայի կանոնները հետևյալներն են.

1. Հիմնական հանցակազմը անհրաժեշտ է նախատեսել քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի առաջին մասում, իսկ ծանրացնող հանգամանքներով հանցակազմերը՝ նույն հոդվածի հաջորդ մասերում: Ա. Ի. Կորոբեևը ձևակերպել է քրեաիրավական նորմի կառուցվածքի կարգը, ըստ որի՝ քրեական օրենքի մեկ հոդվածում անհրաժեշտ է ամրագրել մեկից ոչ ավելի քրեաիրավական նորմ, և հանցագործության ծանրացնող հանգամանքները հոդվածների մասերում անհրաժեշտ է ամրագրել միատեսակ հաջորդականությամբ՝ կա՛ն ըստ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի աճման, կա՛ն ըստ դրա նվազման կարգի¹⁵: Կարծում ենք՝ առավել նախընտրելի է ծանրացնող հանգամանքների նախատեսում ըստ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի աճման, ինչը պահպանված է քր.օր.-ի Հատուկ մասի

¹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Կոկիցակիսն ընդդեմ Հունաստանի գործով վճիռը // «Մարդու իրավունքների եվրոպական դատարան», Վճիռների ժողովածու, Եր., 2003, էջ 365:

¹⁴ Տե՛ս Кудрявцев В. Н., Дагель П. С. и др., Основания уголовно-правового запрета (Криминализация и декриминализация). М., 1982, էջ 232:

¹⁵ Տե՛ս Коробеев А. И. Советская уголовно-правовая политика: проблемы криминализации и пенализации. Владивосток, 1987, էջ 113:

հողվածների մեծ մասում: Սակայն քր.օր.-ի Հատուկ մասի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ հողվածներում այդ կանոնը պահպանված չէ: Այսպես, օրինակ, հողվածներ 123-ը, 128-ը, 152-ը, 154.2-ը, 187-ը, 189-ը, 192-ը, 199-ը, 200-ը, 201-ը, 204-ը, 209-ը, 222-225-ը, 225.1-ը, 235-ը, 237-ը, 238-ը, 254-ը, 263-ը, 266-ը, 286-ը, 291-ը, 306-ը, 324-ը, 332-ը, 340-ը, 343-ը, 348-ը, 349-ը, 371-ը, 382-ը, 387-ը, 388-ը, 390-ը, 391-ը, 395-ը տարբեր մասերով նախատեսում են տարբեր հանցակազմեր, որոնք չեն հարաբերակցվում որպես հիմնական և ծանրացնող հանգամանքներով հանցակազմեր:

Մի կողմից նշված հողվածներում «մեկ հողված-մեկ հանցանք» կանոնից շեղումն ընդամենը օրենսդրական տեխնիկայի հարց է և իրավակիրառման դժվարությունների չի հանգեցնում: Սակայն մյուս կողմից քր.օր.-ի Հատուկ մասի մեկ հողվածում երկու կամ ավելի տարբեր հանցակազմեր նախատեսելը բացասաբար է անդրադառնում այդ արարքների համար քրեական պատասխանատվության օրենսդրական տարբերակման վրա: Այսպես, մեկ հողվածում երկու կամ ավելի տարբեր հանցակազմեր նախատեսելու դեպքում օրենսդիրը հաճախ այլևս տրամադրված չի լինում նախատեսել ծանրացնող հանգամանքներ (օրինակ՝ 152, 154.2, 192, 199, 204, 222, 225, 225.1, 291, 324, 343, 382, 387, 388 հողվածներ): Օրենսդիրը ոչ միայն ուշադրություն չի դարձնում հանցավոր արարքի այս կամ այն դրսևորման հանրային վտանգավորության բարձր աստիճանի վրա, այլև հետին պլան է մղվում նույն հողվածում նախատեսվող հանցանքների հանրային վտանգավորության միջև առկա տարբերությունը: Բացի այդ, մեկ հողվածում երկու կամ ավելի տարբեր հանցակազմեր նախատեսելու դեպքում անհնար է դառնում կիրառել իդեալական համակցության վերաբերյալ նորմը: Ենթադրենք, հանցավորը հափշտակում է պայուսակ, որի մեջ առկա է լինում և՛ պայթուցիկ նյութ, և՛ քիմիական զենք: Սակայն անձի արարքը քր.օր.-ի հողված 238-ի առաջին և երկրորդ մասերի համակցությամբ որակելը կհակասի քր.օր.-ի հողված 20-ի առաջին մասի երկրորդ կետում ամրագրված՝ իդեալական համակցության հասկացությանը, քանի որ իդեալական համակցությունն առկա է միայն քր.օր.-ի երկու կամ ավելի հողվածներով նախատեսված հանցագործությունների դեպքում:

Այսպիսով, հանցանքը ծանրացնող հանգամանքներն անհրաժեշտ է նախատեսել հիմնական հանցակազմը նկարագրող հողվածի երկրորդ, երրորդ և հաջորդ մասերում՝ ձեռնպահ մնալով այդ հողվածում այլ ինքնուրույն հանցակազմեր նախատեսելուց¹⁶: Դա կապահովի քր.օր.-ի Հատուկ մասի հողվածների կուռ տրամաբանական կառուցվածքը և միատեսակությունը: Նշված կանոնի պահպանումն արդարացված կլինի նաև մեթոդաբանական տեսանկյունից, քանի որ անձի արարքում ծանրացնող հանգամանքի առկայությունը հավաստելու համար բոլոր դեպքերում անհրաժեշտ կլինի նախ հավաստիանալ հողվածի առաջին մասում ամրագրված հիմնական հանցակազմի առկայությունը:

¹⁶ Թերևս, բացի ծանրացնող հանգամանքներից, քր.օր.-ի Հատուկ մասի հողվածների մասերում կարող են ամրագրվել խրախուսական և դեֆինիտիվ նորմեր:

2. Ծանրացնող հանգամանքները քր.օր.-ի Հատուկ մասի հողվածում ձևակերպելիս հողվածն անհրաժեշտ է ճիշտ բաժանել կառուցվածքային մասերի և համարակալել դրանք¹⁷: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հողված 41-ի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների հողվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, իսկ հողվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի: Հողվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հողվածի ենթակետերը համարակալվում են հայերեն այբուբենի փոքրատառերով: Հողվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետով, իսկ հողվածների կետերի համարները՝ փակագծերով: Հողվածի ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով: Հողվածի մասերը, կետերը և ենթակետերը վերնագրեր չեն ունենում:

Քր.օր.-ի Հատուկ մասի հողվածների կառուցվածքային տարրերն են մասերը և կետերը: Հողվածի մասերի համարակալման կանոնը պահպանված չէ, օրինակ, քր.օր.-ի հողվածներ 152-ում և 154.2-ում: Ինչ վերաբերում է հողվածի մասի կետերի համարակալման կանոնին, ապա այն պահպանված չէ քր.օր.-ի Հատուկ մասի մի շարք հողվածների մասերում: Այսպես, հողված 127-ի 3-րդ մասում, հողվածներ 186-ի, 220-ի, 290-ի և 362-ի 2-րդ մասերում նախատեսված են հանցակազմի տարբեր տարրերին վերաբերող երկու կամ ավելի ծանրացնող հանգամանքներ, որոնք ամրագրված են ոչ թե համարակալված կետերով, այլ պարզապես թվարկված են նույն մասում և իրարից անջատված են «կամ» շաղկապով:

Տարբեր ծանրացնող հանգամանքները հողվածի տարբեր մասերով և տարբեր կետերով նախատեսելը զուտ ձևականություն չէ: Բանն այն է, որ արարքի քրեահրավական գնահատականի վերջնական արդյունքը ոչ միայն քր.օր.-ի համապատասխան հողվածի, մասի և կետի մատնանշումն է, այլև կոնկրետ ծանրացնող հանգամանքների առկայության շեշտադրումը, ինչը կարևոր է արարքի հանրային վտանգավորության ճիշտ գնահատման և արդարացի պատիժ նշանակելու համար:

3. Քր.օր.-ի Հատուկ մասի հողվածի երկրորդ և հաջորդ մասերում առանձին կետերով նախատեսվող ծանրացնող հանգամանքները պետք է շարադրվեն ոչ թե պատահական հերթականությամբ, այլ ըստ հանցակազմի տարրերի: Որոշ դեպքերում քր.օր.-ի Հատուկ մասի հողվածի տարբեր մասերում համասեռ ծանրացնող հանգամանքները նախատեսվում են տարբեր հերթականությամբ: Օրինակ՝ հողված 177-ի երկրորդ մասում ծանրացնող հանգամանքները նախատեսված են հետևյալ հերթականությամբ՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով, իսկ երրորդ մասում՝ այլ հերթականությամբ՝ առանձնապես խոշոր չափերով, բնակարան ապօրինի մուտք գործելով, կազմակերպված խմբի կողմից: Քանի որ հանցանքը ծանրացնող յուրաքանչյուր հանգամանք

¹⁷ Տե՛ս Кругликов Л. Л., Васильевский А. В. Дифференциация ответственности в уголовном праве. СПб., 2002, էջ 192:

պետք է առավելապես վերաբերի հանցակազմի որևէ տարրին, ապա տրամաբանական է թվում դրանց շարադրումը հետևյալ հերթականությամբ՝ օբյեկտին, օբյեկտիվ կողմին, սուբյեկտին և սուբյեկտիվ կողմին վերաբերող հանգամանքներ: Դա մի կողմից կապահովի քր.օր.-ի Հատուկ մասի հոդվածների կառուցման միատեսակությունը, իսկ մյուս կողմից կուղղորդի օրենսդիրն նոր ծանրացնող հանգամանք նախատեսելիս այն ամրագրել ճիշտ տեղում՝ համասեռ ծանրացնող հանգամանքից հետո:

4. Քր.օր.-ի Հատուկ մասի հոդվածի՝ ծանրացնող հանգամանքները նախատեսող մասերը պետք է բովանդակեն հստակ և միատեսակ հղումներ հոդվածի առաջին մասին (նախորդ մասերին)¹⁸: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 43-ի 7-րդ մասի՝ «Նույն կամ այլ իրավական ակտին հղումները պետք է կատարվեն հստակ և ուղղակի: Արգելվում է կատարել անորոշ հղումներ»: Սակայն, օրինակ, քր.օր.-ի հոդվածներ 127-ի, 188-ի, 263-ի, 311-ի 3-րդ մասերում տրված է «նույն արարքը» ձևակերպումը, և միանշանակ պարզ չէ, թե հոդվածի որ մասն է նկատի ունեցել օրենսդիրը՝ միայն երկրորդը, թե առաջինը և երկրորդը: Ծանրացնող հանգամանքները նախատեսելիս անհրաժեշտ է ձեռնպահ մնալ «նույն արարքը» ձևակերպումից՝ դրա փոխարեն օգտագործելով «սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը», «սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները» և նմանատիպ այլ ձևակերպումներ:

Ինչ վերաբերում է հղումների միատեսակությանը, ապա անհրաժեշտ է ձեռնպահ մնալ նաև հոդվածի երկրորդ, երրորդ մասերում հիմնական հանցակազմի մասնակի վերարտադրումից: Օրինակ՝ քր.օր.-ի հոդված 105-ի երկրորդ մասում «Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում երկու կամ ավելի անձանց սպանությունը» բառերի փոխարեն ավելի ճիշտ կլիներ օգտագործել «սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ» ձևակերպումը: Քր.օր.-ի հոդված 105-ի երկրորդ մասի գործող խմբագրության պարագայում վիճարկման առարկա կարող է դառնալ այն հարցը, թե արդյոք արարքը հոդված 105-ի երկրորդ մասով որակելու համար պարտադիր է, որ անձի մոտ հոգեկան խիստ հուզմունքը ծագած լինի տուժողների բռնության, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ այլ հակաիրավական կամ հակաբարոյական գործողությունների (անգործության) հետևանքով:

5. Ծանրացնող հանգամանքները ձևակերպելիս անհրաժեշտ է պահպանել օգտագործվող հասկացությունների և տերմինների միատեսակությունը: Պետք չէ միևնույն տերմինն օգտագործել տարբեր հասկացությունները բնորոշելու համար և նույն հասկացությունը բնորոշել

¹⁸ Օրինակ՝ քր.օր.-ի հոդված 258-ի երրորդ մասը, նախատեսելով խուլիգանության ծանրացնող հանգամանքները, հղում է կատարում հոդվածի ոչ թե առաջին, այլ երկրորդ մասին, իսկ չորրորդ մասը՝ երկրորդ և երրորդ մասերին: Կարծում ենք, որ ծանրացնող հանգամանքները նախատեսելիս մեծանոսությունը սկզբունքորեն ընդունելի է, եթե, իհարկե, հոդվածի երրորդ մասով ծանրացնող հանգամանքի առկայությունն էականորեն բարձրացնում է հանցանքի հանրային վտանգավորությունը միայն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հատկանիշների առկայության դեպքում:

տարբեր տերմիններով¹⁹: Այդ կանոնն ամրագրված է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 36-ի 4-րդ մասում՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով»: Օրինակ՝ քր.օր.-ի հոդված 178-ի երկրորդ մասի 1.1 կետով որպես խարդախության ծանրացնող հանգամանք է նախատեսված «պաշտոնական դիրքն օգտագործելով» կատարելը, իսկ հոդված 215-ի երրորդ մասի առաջին կետով՝ «պաշտոնատար անձի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով» կատարելը: Գործնականում դա կարող է հանգեցնել տարատեսակ մեկնաբանությունների: Օրինակ՝ արդյո՞ք խարդախությունը կարող է որակվել հոդված 178-ի երկրորդ մասի 1.1 կետով, եթե այն կատարել է պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողը՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով: Եթե ոչ, ապա ինչո՞ւ է հոդված 215-ի երրորդ մասի առաջին կետում հատուկ շեշտվում նաև սուբյեկտը՝ պաշտոնատար անձը, իսկ եթե այո, ապա ինչո՞ւ է հոդված 215-ի երրորդ մասի առաջին կետի կիրառման ոլորտը սահմանափակվել միայն պաշտոնատար անձանց շրջանակով:

6. Ծանրացնող հանգամանքի օրենսդրական ձևակերպման մեջ չպետք է նշվի «ակնհայտ» բառը: Քր.օր.-ի հոդված 29-ի հինգերորդ մասը սահմանում է, որ դիտավորյալ հանցագործության ծանրացնող հանգամանքների համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա գիտակցել է այդ հանգամանքները: Հետևաբար, օրինակ, քր.օր.-ի հոդված 104-ի երկրորդ մասի չորրորդ կետում, հոդված 119-ի երկրորդ մասի չորրորդ կետում, հոդված 124-ի երկրորդ մասի երրորդ կետում «ակնհայտ հղի կնոջ նկատմամբ» կամ հոդված 132.3-ի երկրորդ մասի առաջին կետում «ակնհայտ անչափահասի նկատմամբ» ծանրացնող հանգամանքներում «ակնհայտ» բառը կարող է և չնշվել, քանզի հոդված 29-ի հինգերորդ մասի բովանդակությունից արդեն իսկ հետևում է, որ ծանրացնող հանգամանքի մեղսագրման համար պարտադիր է հանցավորի կողմից դրա գիտակցումը:

Կարծում ենք՝ քր.օր.-ի Հատուկ մասում հանցանքը ծանրացնող հանգամանքները նախատեսելիս վերոնշյալ կանոնների պահպանումը թույլ կտա ապահովել հոդվածների տրամաբանական և միատեսակ կառուցվածքն ու քրեական պատասխանատվության համարժեք տարբերակումը:

Բանալի բառեր – քրեական օրենսգրքի Հատուկ մաս, ծանրացնող հանգամանքներ, հանցակազմ, ծանրացնող հանգամանքների նախատեսման կանոններ, հանցագործության ծանրացնող հանգամանքներով տեսակ, օրենսդրական տեխնիկա

¹⁹ Տե՛ս **Костарева Т. А.** Квалифицирующие обстоятельства в уголовном праве: Понятие; Законодательная регламентация; Влияние на дифференциацию ответственности. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Казань, 1992, էջ 15:

МИСАК МАРКОСЯН – К общим вопросам предусмотрения отягчающих обстоятельств в Уголовном кодексе. – Важным средством дифференциации уголовной ответственности являются отягчающие обстоятельства, предусмотренные в статьях Особенной части Уголовного кодекса. Уголовно-правовое значение этих обстоятельств двояко. С одной стороны, отягчающие обстоятельства – это признаки состава преступления и влияют на уголовно-правовую оценку содеянного. С другой стороны, они не входят в основной состав преступления и по своему содержанию близки к обстоятельствам, отягчающим наказание.

В статье на основе научных позиций, изложенных в литературе, а также анализа отягчающих обстоятельств, предусмотренных в статьях Особенной части Уголовного кодекса РА, в систематизированном виде представлены правила, относящиеся к содержанию и к форме изложения отягчающих обстоятельств.

Ключевые слова: *Особенная часть Уголовного кодекса, отягчающие обстоятельства, состав преступления, правила предусмотрения отягчающих обстоятельств, квалифицированный вид преступления, законодательная техника*

MISAK MARKOSYAN –General Issues on Foreseeing Aggravating Circumstances in the Criminal Code. – The aggravating circumstances foreseen in the articles of the special part of the Criminal Code are important means of the criminal responsibility differentiation. The criminal-legal importance of these circumstances has to be viewed from two aspects. On the one hand, the aggravating circumstances are features of the corpus delicti and have influence on the criminal-legal assessment of the deed. On the other hand, these circumstances are not included in the main corpus delicti and by their content are closer to the circumstances aggravating the punishment.

The article is dedicated to the discussion of the general issues on foreseeing the aggravating circumstances in the articles of the special part of the Criminal Code. Based on the generalization of the scientific positions presented in the literature, as well as on the analysis of the aggravating circumstances provided by the articles of the special part of the Republic of Armenia Criminal Code, the author systemizes the rules in regard to the content and form of providing the aggravating circumstances.

Key words: *special part of the Criminal Code, aggravating circumstances, corpus delicti, rules of foreseeing aggravating circumstances, aggravated type of crime, legislative techniques*